

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր աշխատատեղերի համար.

- Վիրահատարանի բուժքույր /1 դրույք/
- Անեսթեզիստ /1դրույք/
- Կանանց կոնսուլտացիայի մանկաբարձուհի /1դրույք/
- Մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի հերթապահ մանկաբարձուհի /1դրույք/

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները ովքեր ՀՀ-ում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Մրցույթին չի կարող մասնակցել այն քաղաքացին, ով՝

ա/ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված է բժշկական գործունեություն իրականացնելու իրավունքից

բ/ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը

գ/ դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

դ/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթի մասնակցության պարտադիր պայմաններն են

ա/ միջին մասնագիտական բժշկական կրթության առկայություն

բ/ բժշկական էթիկայի կանոնների իմացություն

Մրցույթի մասնակցության լրացուցիչ պայման է

դ/ համակարգչով աշխատելու ունակությունը

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

ա/ դիմում / մրցույթին մասնակցելու համար/

բ/ մեկ լուսանկար 3x4 չափի

գ/ աշխատանքային գրքուկի պատճենը

դ/ ինքնակենսագրություն

ե/ անձնագրի, դիպլոմի, մասնագիտական վերապատրաստումների պատճենները

Դիմումները ներկայացնել մինչև 2019թ. հուլիսի 29, ժամը 16:00:

Հասցե՝ ք. Ստեփանավան Սուրբ Վարդանի 1, հեռախոս 0256-2-32-28

Մրցույթը տեղի կունենա «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2019թ. օգոստոսի 5-ին ժամը 12:00